Հաստատված է
30.08.23թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի Վիլյամ Սարոյանի անվան հ. 138 հիմնական դպրոցի ՄԿԱ տնօրենի տեղակալի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների

Հիմնվելով ՄԿԱ-ի պաշտոնային պարտականությունների վրա, օգտվելով դպրոցի զարգացման ծրագրից՝ կազմվել է դաստիարակչական աշխատանքի ծրագիր և ներկայացվել է դպրոցի տնօրենի հաստատման: Դպրոցի կոլեկտիվը մեծ պատասխանատվությամբ է նվիրվում աշխատանքին և կատարում իր առջև դրված խնդիրները, որի շնորհիվ լիարժեք ու համակողմանի է դառնում դպրոցական կյանքը:

Երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են կրթության և դաստիարակության արդյունավետությանն ուղղված միջոցառումներ, համակարգվել է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները: Միշտ ուշադրության կենտրոնում է եղել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ կիսամյակում սերտ կապ ու համագործակցություն է ստեղծվել դպրոցի և սովորողների ընտանիքների միջև: Առանձնակի ուշադրության են արժանացել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները (օգնությունը ծնողխորհուրդների կողմից, անվճար դասագրքերի ստացում): Պատշաճ ձևով կազմակերպվել է սովորողների հանգիստն ու ժամանցը:

Աշխատանք է տարվել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ: Հսկողություն է իրականացվել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության, վարքի և հաճախելիության նկատմամբ:

Աշխատանքներ են տարվել կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման ուղղությամբ: Դպրոցի աջակցող թիմի հետ համատեղ կազմվել են անհատական ուսուցման պլաններ: Ապահովվել է սովորողի ընտանիքի հետ սերտ կապն ու համագործակցությունը:

Դպրոցի ՄԴԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է աշակերտական խորհրդի աշխատանքը, պայմաններ են ստեղծվել դպրոցի հասարակական վերահսկողության (աշակերտական հերթապահության և աշակերտական խորհրդի գործունեության) համար:

Պարբերաբար տեղի են ունեցել դասղեկների սեմինար-խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են դասղեկների և դասվարների կատարած աշխատանքները, բացահայտվել են աշխատանքում տեղ գտած թերությունները, ցուցաբերվել է գործնական օգնություն:

Կազմակերպվել են բազմաթիվ ու բազմապիսի միջոցառումներ, դասղեկական ժամերին քննարկվել են պլանով նախատեսված թեմաներ: Բոլոր միջոցառումներին, այլ կազմակերպական հարցերին մեծ աջակցություն են ցուցաբերել ծնողական խորհրդի անդամները: Տարվա ընթացքում պարբերաբար տեղի են ունեցել ծնողական խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են դպրոցին և ծնողին հուզող հարցեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապագա քաղաքացու ինքնաճանաչման. նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում. ազատ և համակողմանի զարգացած. ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Օգտվել ժողովրդավարական հարաբերություններից. ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա. բարելավել դասի դաստիարակչական կողմը:
2. Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության. ինքնակառավարման. ինքնուրույն գործելու. վերլուծական մտածողության. անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք:
3. Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին. հայրենասիրության. հումանիզմի. հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքային համակարգի ձևավորմանը:
4. Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք. արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դասղեկների հետ տարվող աշխատանք:
2. Դպրոցի կարգապահական. դաստիարակչական. ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում:
3. Աշխատանքներ աշակերտների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով. ծնողազուրկ. վարքի շեղում ունեցող. շնորհալի երեխաներ):
4. Աշխատանք ծնողական խորհրդի և ծնողական համայնքի հետ:
5. Աշխատանք համայնքի ՆԳ մանկական սենյակի և իրավապահ մարմինների աշխատակիցների հետ (խիստ անհրաժեշտության դեպքում՝ ելնելով համավարակի պայմաններից):
6. Աշխատանք սովորողների համակողմանի զարգացման ուղղությամբ.
   - ա. Հայրենագիտական և հայեցի դաստիարակություն:
   - բ. Հոգևոր.գեղագիտական. բարոյական. էկոլոգիական. իրավական. քաղաքացիական դաստիարակություն:
   - գ. Ֆիզիկական դաստիարակության և առողջապահական միջոցառումներ:
7. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ:
8. Գրադարանի հետ տարվող աշխատանք:
9. Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանք:

ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
1. Անցկացնել մեթոդական սեմինարներ նվիրված դասղեկների գործունեությանը և դասղեկների ամենօրյա աշխատանքի կազմակեպմանը:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
2.Անցկացնել դասղեկների հետ սեմինար խորհրդակցություն՝ նվիրված դասղեկի պարտականություններին: Կազմել դասղեկի ժամերի կարգացուցակ և անցկացնել դասալսումներ:	Սեպտեմբեր	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
3.Անցկացնել դասվար-դասղեկների սեմինար խորհրդակցություններ՝ նվիրված սովորողների դաստիարակությանը:	Պարբերաբար	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
4.Կազմակերպել դասվարների աշխատանքի ուսումնասիրություններ:	Պարբերաբար	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
5.Կազմակերպել դասղեկների աշխատանքի ուսումնասիրություններ և նպաստել լավագույնների աշխատանքի փորձի տարածմանը:	Պարբերաբար	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
6.Ուսումնասիրել և բացահայտել դասղեկների աշխատանքում տեղ գտած թերություններն ու գործնական օգնություն ցույց տալ նրանց:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
7.Դասղեկների սեմինար խորհրդակցություններում լսել հաշվետվություններ դասղեկների կատարած աշխատանքների վերաբերյալ:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
8.Դասղեկական ժամերի թեմատիկայի քննարկում (ներբեռնել թեմաների ցանկը):	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
9. Կատարել դասալսումներ: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել, վերլուծել ուսուցիչների հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություններն ու առաջարկությունները:	Ամեն շաբաթ	ԵՎ. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄՄ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ	ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Հ.	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
1.	Աշխատանք կատարել սովորողների վարքի. վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ. աջակցել դպրոցական ինքնավարությանը. հետևել ուշացումներին. ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ հաշվի առնելով հանրապետությունում համավարակի պատճառով ստեղծված պայմանները:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՄԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ և ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	Տնօրինություն
2.	Կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված տոնական և հիշարժան օրերին:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՄԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
3.	Անհատական աշխատանքներ կազմակերպել շնորհալի. ստեղծագործող աշակերտների հետ մասնակից դարձնելով ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին:	Ուստարվա Ընթացքում	ԵՎ.ԲԱՐՄԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
4.	Հերթապահություն սահմանել դասասենյակները ախտահանելու համար՝ բարձրացնելով աշակերտների սեփական անվտանգությունն ապահովելու պատասխանատվությունը:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	
5.	Ապահովել դպրոցի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը աշակերտների կարգապահությունը բարձր մակարդակի վրա դնելու համար (հաճախումներ. անհարգելի բացակայությունների պատճառների պարզաբանում):	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՄԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	

6.	Հսկողություն իրականացնել հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարման նկատմամբ:	Ուստարվա ընթացքում	ԵՎ. ԲԱՐՍԵՂՅԱՆ	

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	պատասխանատու	Նշումներ
1	Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացած աշակերտներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ (եթե կան այդպիսիները):	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԱՋԱԿՑՈՂ ԹԻՄ	
2	Աշակերտների տարբեր խմբերի հետ աշխատանքներին մասնակից դարձնել ծնողական խորհրդին:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՎԱՐՆԵՐ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՆԵՐ	
3	Ուշադրության կենտրոնում պահել անհատական աշխատանք պահանջող աշակերտներին. բացատրական զրույցներ անցկացնել վարքի շեղում ունեցող երեխաների հետ.նրանց ընդգրկել արտադասարանական խմբակներում կազմակերպվող միջոցառումներում:	Ուստարվա Ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԱՋԱԿՑՈՂ ԹԻՄ	
4	Դասղեկական ժամերին անցկացնել «Ինչու է անհրաժեշտ ինտեգրումը». «Ես ձեզանիղ մեկն եմ» թեմաներով զրույցներ դպրոցի հոգեբանի և հատուկ մանկավարժի մասնակցությամբ:	Պարբերաբար	ԴԱՍՎԱՐՆԵՐ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
5	Կազմել երկարօրյա խմբի /խմբերի/ աշխատանքի կարգացուցակը և աշխատանքի տարեկան պլանը	Սեպտեմբեր	ԵՎ. ԲԱՐՍԵՂՅԱՆ	ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
6	Ապահովել հաստատության երկարօրյա խմբի /խմբերի/ աշխատանքների իրականացումը	Ուստարվա Ընթացքում	ԵՎ. ԲԱՐՍԵՂՅԱՆ	

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխան ատու
1.Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ. ընտրել խորհրդի անդամներ և նախագահներ:	Սեպտեմբեր	ԴԱՍՂԵԿՆԵՐ. ԴԱՍՎԱՐՆԵՐ	
2.Հրավիրել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր:	Սեպտեմբեր	Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
3.Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ. նրա բոլոր անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրությանը: Պլանավորել և կոորդինացնել ծնողական խորհրդի գործունեությունը:	Սեպտեմբեր	Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
4.Ծնողական խորհրդի հետ համատեղ կազմակերպել սովորողների կենցաղային պայմանների ուսումնասիրություններ. հետևել սովորողների արտաքին տեսքին և անձնական հիգիենային:	Ուստարվա Ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
5.Դասարանների ծնողական խորհուրդների հետ համատեղ ճշտել սոցիալապես ապահով. միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ. բազմանդամ ընտանիքների երեխաների ցուցակները և համապատասխան աշխատանք տանել նրանց օգնելու ուղղությամբ:	Սեպտեմբեր	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՎԱՐՆԵՐ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԾՆՈՂԽՈՐՀԴԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ	
6. Նպատակային օգտագործել ծնողական համայնքի ուժերը սովորողների հիմնական պարտադիր կրթության իրականացման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	

7.Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների արտադպրոցական և արտադասարանական, ներդպրոցական միջոցառումներ: Կազմակերպել աշխատանքային հանդիպումներ ՝ ուսուցիչ-ծնող համագործակցությունը որպես ուսուցման արդյունավետության գրավական	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՄԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ ՍԴԱԿ ԵՎ.ԲԱՐՄԵՂՅԱՆ	ՄԿԱ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

	Աշխատանքի բովանդականությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
1.	Գիտելիք օր	Սեպտեմբերի 1	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ ՍԴԱԿ	
2.	ՀՀ Անկախության տոնին նվիրված միջոցառում:	Սեպտեմբերի 21	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԴԱԿ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԶԻՆՂԵԿ	
3.	Դպրոցի շենքի ու գույքի պահպանման և ախտահանման վերաբերյալ զրույցներ անցկացնել աշակերտների հետ: Ներգրավել աշակերտական խորհրդին:	Սեպտեմբեր	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՎԱՐՆԵՐ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
4.	Կազմակերպել միջոցառում նվիրված երեխաների համաշխարհային օրվան:	Նոյեմբերի 20-ին	ԴԱՍՂԵԿՆԵՐ ԾՆՈՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	
5.	Կազմակերպել Ամանորյա միջոցառումներ:	Դեկտեմբեր	ԴԱՍՂԵԿՆԵՐ ԴԱՍՎԱՐՆԵՐ	ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
6.	Դպրոցի բուժքրոջ միջոցով անցկացնել զրույցներ՝ սովորողների օրվա ռեժիմի. անձնական հիգիենայի. տիրող համաճարակային վիճակի և առողջապահական այլ թեմաներով:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ ԲՈՒԺՔՈՒՅՐ	
7.	Կազմակերպել գրական-երաժշտական ցերեկույթներ՝ նվիրված միջազգային և հայաստանյան տոներին ; Դարձի՛ր գրադարանի բարեկամ: Ընթերցանության մրցույթ:		ԱԽ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ	
8.	Անցկացնել դպրոցական առարկայական օլիմպիադաներ	Ըստ ժամանակացույցի	ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԴԱԿ	

ԱԶԳԱՅԻՆ և ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխան.
1.	Աշակերտներին բացատրել մարդկության գոյության իմաստը. արժևորել պատմական անցյալի և ապագայի դերը աշակերտների բարոյական հատկանիշների ձևավորման գործում:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
2.	Աշակերտների մոտ իրենց անձի նկատմամբ հետաքրքրություն և կատարելագործման ցանկություն առաջացնել:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
3.	Զարգացնել աշակերտների կա-մային հատկանիշները.ձևավորել սեփական անձի թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողություն:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
4.	Աշակերտներին ծանոթացնել ազգային ավանդույթներին. հոգևոր արժեքներին:	Ուստարվա Ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
5.	Կազմակերպել քննարկում՝ «Հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուրիս պարտականությունն է» թեմայով:	Ուստարվա ընթացքում	ԶԻՆՂԵԿ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
6.	Արական սեռի աշակերտներին ծանոթացնել զենքի կիրառման հմտություններին:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԶԻՆՂԵԿ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
7.	Ռազմահայրենասիրական երգերի ունկնդրում և ուսուցանում:	Ուստարվա ընթացքում	ԶԻՆՂԵԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ	

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

h.	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
1	Երեխաների մոտ ձևավորել մարդասիրական աշխարհայացք. սեփական իրավունքների գիտակցում. բարոյական դիրքորոշումներ:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
2.	Աշխատել ուշադրության արժանացնել կամավորության. համագործակցության. հանդուրժողականության ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողության. բանավիճելու հմտության դաստիարակչական ուղղությունները:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
3.	Համագործակցել իրավապահ մարմինների հետ: Կազմակերպել հանդիպումներ ՆԳ աշխատակիցների հետ:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
4.	Երեխաներին ծանոթացնել իրենց իրավունքների և պարտականությունների հետ:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
5.				

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
1.Անցկացնել նոր ուսումնական տարվա առաջին աշակերտական ընդհանուր ժողովը. որի ընթացքում ընտրել դպրոցի աշակերտական խորհրդի և դասարանա- կան ինքնավարության մարմինների ընտրություններ կազմակերպող նախաձեռնող խումբ 6 - 9 - րդ դասարաններից:	Սեպտեմբեր	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԴԱԿ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
2.Անցկացնել դասարանական ընդհանուր ժողովներ և ընտրել դասարանական խորհուրդներ:	Սեպտեմբեր	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԴԱԿ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
3. 6 - 9 - րդ դասարանների ներկայացուցիչներից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել աշակերտական խորհուրդ: Ընտրել աշակերտական խորհրդի նախագահ:	Սեպտեմբեր	Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԴԱԿ	
4.Կազմակերպել և իրականացնել նախապատրաստական աշխատանքներ աշխատանքներ՝ ներառելով հետևյալը՝ ● Փոխանցման հնարավոր ուղիները և կանխարգելիչ միջոցառումները իրականացնել՝ առաջնորդվելով պարետի 2020թ. Օգոստոսի 18-ի N 253-Ն որոշման հավելված N 22-ով: ● Անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ) կիրառման կանոնները: Կորոնավիրուսային հիվանդության առկայության դեպքում անհրաժեշտ գործողությունների կատարում:	Սեպտեմբեր	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԴԱԿ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Նշումներ
1.Գրադարանի հետ համատեղ կազմակերպել գրադարանային ֆոնդի դասագրքերի ու գրքերի վերանորոգումը: Գրադարանավարի հետ համատեղ այցելել դասարաններ՝ դասագրքերի ստուգման նպատակով::	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
2.Ճշտել պահանջվող դասագրքերի քանակը և ըստ դասարանների հայտ ներկայացնել:	Օգոստոս 20	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ	
3.Կազմել ժամանակացույց և կազմակերպել նոր դասագրքերի բաշ-խումը ըստ դասարանների:	Օգոստոս 20-ից սեպտեմբերի 10-ը	Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ	
4.Սոցիալապես անապահով աշակերտներին տրամադրել դասագրքեր. ճշտել ցուցակը:	Ուստարվա ընթացքում	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ	
5.Գրադարանը գրքերով համալրելու ուղղությամբ բացատրական աշխատանք տանել սովորողների շրջանում:	Ուստարվա ընթացքում	Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԴԱՍՂԵԿՆԵՐ	

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
1.Բարձր դասարանի աշակերտներին բացատրել մարդկային բարոյական ու հոգևոր արժեքները.արժևորել պատմական անցյալի և ապագայի դերը աշակերտների բարոյական հատկանիշների ձևավորման գործում:	Հոկտեմբեր	ԵՎ.ԲԱՐՍԵՂՅԱՆ	
2.Բացատրել անձի. հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթացը. որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար.	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
2.Աշակերտների մոտ առաջացնել հետաքրքրություն իրենց անձի նկատմամբ. և կատարելագործման ցանկություն:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
3.Զարգացնել աշակերտների կամային հատկանիշները. ձևավորել սեփական անձի թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողություն:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՂԵԿՆԵՐ	
4.Կազմակերպել զրույցներ. ծանոթացնել ազգային ավանդույթներին. հոգևոր արժեքներին: Քաղաքացիական. հայրենասիրական. հումանիստական գաղափարներ սերմանել աշակերտների մեջ:	Ուստարվա ընթացքում	ԴԱՍՎԱՐՆԵՐ ԴԱՍՂԵԿՆԵՐ	

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարող	Պատասխանատու
1.	Անցկացնել հանդիպումներ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար » թեմաներով:	Ուստարվա ընթացքում	ԲՄԹ	ՈՒԱ գծով տեղակալ ՄԿԱ ԲԱԹ
2.	Համագործակցել ԲՄԹ –ի մասնագետների հետ	Ուստարվա ընթացքում		ՈՒԱ գծով տեղակալ ՄԿԱ ԲԱԹ
3.	Վերահսկել ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալական գործընթացը	Ուստարվա ընթացքում	ԲՄԹ	
4.	Աջակցել ԿԱՊԿՈՒ աշակերտներին	Ուստարվա ընթացքում	ԲՄԹ	ՈՒԱ գծով տեղակալ ՄԿԱ ԲԱԹ